



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ  
ՀՀ ԲՆԱՊԱՌՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐ



*Արքայից*

Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«16» 01 2018թ

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻԶԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 03

Ձեռնարկողը՝

«Հյ Թի Էմ Էս Սույուշնս» ՍՊԸ

Ք. Երևան, Վ. Սարգսյան 26/3

Գործունեությունը՝

«Հկալովկա գյուղում Ռազմիկ <ովհաննիսյանին  
պատկանող շինության 0.22կՎ էլեկտրամատակարարում>>  
նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության  
գնահատման հաշվետվություն  
«Գեղարքունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈՄԿ-ի  
տնօրեն՝

Վ. Սահակյան



Առջիր եզրակացությունը՝ Կ թերթ

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

թիվ ԲՓ 03

<<16 >> 01 2018թ.

**<<Զկալովկա գյուղում Ռազմիկ Հովաննիսյանին պատկանող շինության  
0.22կՎ էլեկտրամագրակարարում>> աշխատանքային նախագծի շրջակա  
միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվեպահպահություն**

Պատվիրատու' <<Եյ Թի Էմ Էս Սոյուշնս>> ՍՊԸ

Նախագծող՝ <<Եյ Թի Էմ Էս Սոյուշնս>> ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝ Աշխատանքային նախագիծ.  
- շրջակա միջավայրի վրա ազդեցության  
(ՇՄԱԳ) հաշվետվություն,  
- նախագծային փաստաթուղթ:

Տեղադրման վայրը՝ <<Գեղարքունիքի մարզ



Սույն նախագծի համար հիմք է հանդիսացել <<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> ՓԲԸ-ի <<Գեղամա>> մասնաճյուղի կողմից տրված № 27209111 առ 10.03.2017թ. էլեկտրական ցանցին միացման տեխնիկական և 07.08.2017թ. Զկալովկա համայնքի կողմից տրված ճարտարապետակագծային առաջադրանքները:

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է <<Գեղարքունիքի մարզում, փոքր Սևանի հարավ-արևմտյան ափին՝ Սևան քաղաքից 5.0կմ հեռավորության վրա: Ուսումնասիրվող տարածքի ռելիեֆն անհարթ բլրային է, մակերևույթի ընդհանուր թեքությունը հարավ-արևելյան, իսկ բարձրությունները տատանվում են 1898-2000մ սահմաններում:

Ռազմիկ Հովհաննիսյանին պատկանող շինությունը գտնվում է "Սևան" ազգային պարկի ոչ ափամերձ հատվածում՝ Զկալովկա համայնքի բնակելի տարածքում: Էլեկտրամատակարարման օդային գիծն անցնում է Զկալովկա համայնքի տարածքով՝ Սևան-Մարտունի-Գետափ Մ10 ավտոճանապարհի պահպանական գոտիով, վերգետնյա եղանակով: Նախատեսվող գործունեության տարածքում աշխատանքների իրականացման համար հարկավոր է իրականացնել 3.6մ<sup>3</sup> ծավալով փորման աշխատանքներ: Առաջացած հողն ամբողջությամբ օգտագործվելու է փոսորակների լցման և տարածքի ռեկուլտիվացման համար:

Ըստ փաստաթղթերի՝ Ռազմիկ Հովհաննիսյանին պատկանող տարածքի/շինության էլեկտրամատակարարումը նախատեսվում է իրականացնել ԼՏԵ 4756-ից սնվող 0.4կՎ 0.4-

ի "Արմեն Խաչատրյան" ճյուղավորման № 4 հենարանից՝ կառուցելով 0.4կՎ օդային գիծ, որի վերջին № 12 հենարանից կառուցվելու է 0.22կՎ ՕԳ մինչև սպառիչի կանգնակը: Կառուցման ենթակա օդային գիծը գտնվում է Չկալովկա համայնքի վարչական տարածքում և ընդհանուր երկարությունը կազմում է 369.0մ, որից՝ 0.4կՎ ՕԳ-ի հատվածը՝ 333.0մ, իսկ 0.22կՎ ՕԳ-ի հատվածը՝ 36.0մ:

Նախագծով նախատեսվում է տեղադրել հետևյալ տիպի երկաթբետոնե հենասյուները.

- միականգնակ միջանկյալ Π տիպի՝ 6 հատ (№ 3, 4, 5, 6, 8, 12),
- միականգնակ վերջնամասային խարսխային K1 տիպի՝ 4 հատ (№ 2, 9, 11, 13),
- միականգնակ անկյունային միջանկյալ YΠ1 տիպի՝ 1 հատ (№ 7),
- միականգնակ անկյունային խարսխային YΑ1 տիպի՝ 1 հատ (№ 10):

Բաժանորդի էլեկտրասնուցումն իրականացնելու համար նախատեսվում է կառուցել 0.4կՎ ՕԳ, որը սկիզբ է առնելու ԼՏԵ 4756-ի 0.4կՎ ՕԳ-ի գոյություն ունեցող փայտե հենասյունից (№ 1 ըստ նախագծի) ճյուղավորումով, անցնելու է № 2-12 նոր տեղադրվող եթե հենասյուներով, հասնելու է № 13 նոր տեղադրվող եթե հենասյանը, որից էլ սկսվելու է 0.22կՎ օդային գիծը՝ № 13 հենասյունից ուղիղ թռիչքով միանալով բաժանորդի կողմից տեղադրվող մետաղական կանգնակին: Օդային գծերը ընտրվել են ըստ թույլատրելի հոսանքի և ստուգվել ըստ լարման շեղման:

Համաձայն 2007 թ.-ի հուլիսի 12-ի << կառավարության կողմից հաստատված <<էլեկտրական էներգիայի հաղորդաբաշխման վերաբերյալ տեխնիկական կանոնակարգ>>-ի V-րդ գլուխ 32.1 կետի՝ ՕԳ-ի հաղորդալարից մինչև բնակեցված և չընակեցված տեղանքի գետնի մակերևույթը և փողոցների երթևեկելի մասերը հեռավորությունն ուղղաձիգով պետք է լինի ոչ պակաս 5.0մ, ինչն ապահովված է տվյալ նախագծում:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում մթնոլորտի հիմնական աղտոտիչներն են՝

- շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում վառելիքի այրման արդյունքում առաջացող արտանետումները,
- հողային/փորման աշխատանքների և գրունտի տեղափոխման ընթացքում, ինչպես նաև շահագործվող տեխնիկայի շարժից առաջացող փոշին:

Շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցները, որոնք պլանավորվում է օգտագործել գործունեության իրականացման ժամանակ, հանդիսանում են չկազմակերպված արտանետումների հիմնական աղբյուրները:

Նախատեսվող գործունեության տարածքում աշխատանքների իրականացման համար հարկավոր է իրականացնել 3.6մ<sup>3</sup> ծավալով փորման աշխատանքներ: Հանվող հողի՝ 1.41մ<sup>3</sup>, ծավալը բնահող է, որի տեղափոխման կարիք չկա, քանի որ այն օգտագործվելու է տեղում հենասյուների տեղադրման աշխատանքներին գուգահեռ:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա էլեկտրամատակարարման օդային գծի հենասյուների կառուցման ընթացքում՝ շինարարական աղբն է՝ մոտ 0.01տ քանակությամբ, որի հիմնական մասը կազմելու է այսումինե հաղորդալարերի մնացորդները: Որոնք աշխատանքների ավարտից հետո կտեղափոխվեն <<ԷՅ>> ՓԲԸ-ի Գեղամա մասնաճյուղի <<Սևան>> էլցանցի պահեստ՝ այլ տեղամասերում նորոգման աշխատանքներում օգտագործելու նպատակով:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվում է շինարարական հարթակների ջրցանի, ինչպես նաև ինժեներատեխնիկական անձնակազմի, բանվորների և վարորդների կոմունալ կենցաղային կարիքների ապահովման համար:

Աշխատանքային նախագծի տվյալների համաձայն էլեկտրամատակարարման օդային գծի հենայուների տեղադրման համար անհրաժեշտ հողատարածքի մակերեսը կկազմի  $1.56\text{m}^2$ : Հետևաբար, կարելի է փաստել, որ նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կազդվի "Սևան" ազգային պարկի մոտ  $1.56\text{m}^2$  հողատարածք:

Ըստհանրացնելով և վերլուծելով ներկայացված նախագծային փաստաթղթերը, ՀՀ բնապահպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումների և ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիանների նախարարության կարծիքները, իրականացված հանրային քննարկումների արձանագրությունները, ինչպես նաև փորձաքննության գործընթացում ի հայտ եկած դիտողությունների ու առաջարկությունների հիման վրա լրացակված նախագծային փաստաթղթերը կարելի է անել հետևյալ եզրահանգումներ:

Համաձայն ներկայացված փաստաթղթերի, նախատեսվող օդային գծի շինարարության և շահագործման փուլերի համար գնահատվել է բնապահպանական և սոցիալական ազդեցությունները: Ազդեցության գնահատման գործընթացում քննարկվել են ծրագիր երեք այլնտրանքային տարբերակներ, կապված բնապահպանական միջամտության ծավալից և հիմնված հետևյալ չորս սկզբունքների վրա.

- նվազագույնի հասցնել բացասական ազդեցությունները լանդշաֆտի, կենսաբազմազանության վրա, զերծ մնալով միջամտությունից պահպանվող տարածքներում,
- խուսափել մշակութային ժառանգություն հանդիսացող վայրերից և էկոլոգիական հետաքրքրություն ներկայացնող տարածքներից,
- խուսափել բնակավայրերից և կառուցապատման տարածքներից:

Օդային էլեկտրահաղորդման գիծը անբողոքային նախագծվել է հաշվի առնելով շրջակա միջավայրի վրա ազդեցության խնդիրները:

Վերականգնման (ոեկոլոգիկացման) ենթակա հողերի մակերեսը կկազմի՝  $1.56\text{m}^2$ : Նախատեսված միջոցառումների արդյունքում (օդային գծի կառուցման ընթացքում) տարածքի աղտոտվածությունը՝ շրջակա միջավայրի բոլոր բաղադիչներով, կգտնվի թույլատրելի նորմայի սահմաններում: Նախագծում լուծված են գրունտների տեղափոխման, կեղտաջրերի հեռացման, աղբահեռացման, մթնոլորտի աղտոտվածության նվազեցման հարցերը: Նախատեսված են շրջակա միջավայրի բարելավմանն ուղղված բավարար միջոցառումներ: Այսպիսով, հիմք ընդունելով նախագծով նախատեսված բնապահպանական միջոցառումների ծրագրը, արդյունքում  $0.22\text{կՎ}$  նոր ՕԳ-ի աշխատանքները՝ ուսումնասիրվող տարածքում և նրա շրջակայքում, կարող է իրականացվել, ինչպես նաև շահագործվել առանց սոցիալական և էկոլոգիական նշանակալի բացասական ազդեցությունների՝ եթե իրականացվեն բոլոր առաջարկվող մեղմման/նվազեցման միջոցառումները:

1. Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է << օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները:
2. Աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել հաշվի առնելով <<Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին>> <<օրենքի 20-րդ հոդվածի պահանջները:
3. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախագծային փաստաթղթերում և ՇՄԱԳ հաշվետվությունում ամրագրված բնապահպանական ծրագրի պահանջներին՝ բացառելով հատուկ պահպանվող տարածքներում ցանկացակ աշխատանքների իրականացումն, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցից միջոցառումներ՝ պարտադիր կարգով պահպանելով բնապահպանական, կառուցման և շահագործման հետ կապված բոլոր նորմերը:
4. Շինարարության և շահագործման ընթացքում առաջացած շինաղբը (կենցաղային աղբ), ինչպես նաև ջրօգտագործումն անհրաժեշտ է իրականացնել << օրենսդրությամբ սահմանված կարգով:
5. Շինարարական փուլում՝ շինարարական աշխատանքների կազմակերպման պլանի մշակման ընթացքում, ներկայացված նախագծային հիմնական լուծումներից շեղվելու դեպքում (որը կրերի շրջակա միջավայրի վրա զգալի ազդեցության), անհրաժեշտ է << օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել << բնապահպանության նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Եյ թի Էմ Էս Սոլյուշնս>> ՍՊԸ կողմից ներկայացված <<Չկալովկա գյուղում Ռազմիկ Հովաննիսյանին պատկանող շինության 0.22կՎ էլեկտրամատակարարում>> աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ



Կ. Մովսիսյան